

ՄՈՎԱՆՍ
ԽՈՐԵՆԼՅՈՒ
ԱՍՈՒՅԹՆԵՐԸ



ԵՐԵՎԱՆ

UNIVERSITY OF TORONTO LIBRARY
130 St. George Street, Toronto, Ontario M5S 1A5

THE UNIVERSITY OF TORONTO
LIBRARY
130 St. George Street, Toronto, Ontario M5S 1A5



UNIVERSITY OF TORONTO LIBRARY
130 St. George Street, Toronto, Ontario M5S 1A5

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ИЗРЕЧЕНИЯ
МОВСЕСА ХОРЕНАЦИ

Составитель Г. Б. ТОСУНЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1991


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ
ԱՍՈՒՅԹՆԵՐԸ

Կազմող՝ Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

A
19271



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԵ
ԵՐԵՎԱՆ 1991

Տպագրվում է Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մովսես Խորենացու ասույթները: [Ժողովածու] /
ՀԳԱ արևելագիտության ին-տ; կազմ.՝ Գ. Բ. Թո-
սունյանը: Պատ. խմբ.՝ Պ. Մ. Մուրադյան].— Եր.:
ՀԳԱ հրատ., 1991.— 59 էջ:

Ժողովածուում տեղ են գտել պատմաճայր Մովսես Խո-
րենացու ասույթները, թեևավոր խոսքերը, իմաստախոսու-
թյունները՝ քաղված նրա «Հայոց պատմության» էջերից:

Լույս է տեսնում «Հայոց պատմության» ստեղծման
1500-ամյակի առթիվ:

Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՅ

Մեծն Մովսես Խորենացին իրավամբ վաստակել է «Պատմահայր» և «Քերթողահայր» պատվատիտղոսները: «Հայոց պատմությունից» բացի մեզ են հասել նրա մի քանի այլ ստեղծագործություններ ևս՝ «Հոփսիմյանց պատմությունն» ու «Ներքողյանը», «Վարդավառի ճարը», «Աղեփսանդր Մակեդոնացու պատմությանը» քարգմանությունը, մի քանի շարական և այլն: Քերթողահոր խոշորագույն գործը, անշուշտ, «Հայոց պատմությունն» է, ուր ներկայացված է ժողովրդի պատմությունը՝ վաղնշական ժամանակներից մինչև 440 թ.: Այդ գրքով հայոց հարյուրավոր սերունդներ են դաստիարակվել, և այսօր էլ այն արդիական է. մանավանդ իր հերոսականությամբ ու արժանավոր ոգով:

Սույն ժողովածուն ամփոփում է Մովսես Խորենացու Պատմության ասույթները, քեավոր խոսքերը, իմաստաստությունները, բնորոշումներն ու սանմտումները, որոնք մտքի ու փորձի բանձրացումներ են՝ մի մասը շատ վաղուց ասացվածքների վերածված: Ասույթները ընթերցողին հնարավորություն են տալիս գաղափար կազմելու մեծ մտածողի՝ իմաստասերի, պատմիչի, գրողի ու բանաստեղծի աշխարհայացքի ու ընկալումների, խոհի ու նրա խորքի մասին:

«Հայոց պատմությունից» ֆաղված ասույթները հիմնականում ներկայացվում են ակադ. Ստ. Մալխասյանի քարգմանությամբ՝ մեր մասնակի միջամտություններով: Ի դեպ, ասույթներ ենք ֆաղել նաև գողթան երգերից, որոնք մեզ են հասել Մովսես Խորենացու Պատմության միջոցով:

Կարծում ենք, քերթողահոր «Հայոց պատմությունից» ֆաղված ասույթների սույն ժողովածուն ջերմորեն կընդունվի ընթերցող հասարակայնության կողմից և կօժանդակի V դարի այդ մեծ մտածողի վաստակի ու ինքնության ճանաչմանը:

Ան որով տեսանեմ և գայս, զի եթէ որք յառաջ քան
գմեզ և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս
Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեօք գտելոց
իմաստնոց զայսպիսիեացս հրամայեցին կարգել զյիշա-
տակս բանից, և ոչ արտաբուստ ուստեք այսոցիկ ի ներսս
ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, և զքեզ այժմ
այսպիսի եղեալ ծանեաք,—ապա ուրեմն յայտ է, թէ ամե-
նեցուն քան զքեզ նախագունիցն հանաչիս վեհագոյն, և
բարձրագունից արժանատր գովութեանց, և յայսպիսիս
պատկանատր դնիլ յարձանագրութիւնս բանիցս:

(Գիրք առաջին, Ա):

Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց և մեք զանուանս
հաւաստի գիտեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացոց աշխար-
հին: Եւ գովելիք են, որպէս իմաստասիրեցեալքն, յաղագս
ջանին և իմաստութեանն առ ի յայլոց լինելոյ գտալիք, առա-
ւել ևս որք ընկալան և պատուեցին զայսպիսի գիտս իմաս-
տից: Վասն որոյ և զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր
կամ դայեակ ասել իմաստից:

(Գիրք առաջին, Բ):

Զի թէպէտ և եմք ածու փոքր, և բուով յոյժ ընդ փոքու
սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոլով ան-
գամ նուանեալ բազատութեամբ՝ սակայն բազում գործք
արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և ար-
ժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտ յան-
ծին կալաւ մատենագրել:

(Գիրք առաջին, Գ):

Մրա հետ միասին հետևյալն էլ եմ նկատում, որ երբեմեզանից առաջ և մեր ժամանակ ապրող՝ Հայոց աշխարհից եղապետներն ու իշխաններն ո՛չ իրենց ձեռքի տակ ընկած և հավանորեն եղած իմաստուններին հրամայեցին այսպիսի պատմական հիշատակարաններ գրել, ո՛չ էլ մտածեցին դրսից որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ, և այժմ մեզ (Սահակ Բագրատունի) եմ տեսնում այսպիսի մարդ. ուրեմն պարզ է, որ դու պետք է նաեւաչլես բոլոր քեզանից առաջ եղածներից վեհագույն և բարձրագույն գովեստների արժանավոր և պատմական այսպիսի սրձանագրության մեջ դրվելու արժանի:

(Գիրք առաջին, Ա):

Եվ այս (արվեստները) ժողովեցին մարդիկ, որոնց աւնունները մենք հավաստի գիտենք, և նվիրեցին հելլենացոց աշխարհին, փառավորելով հրան: Եվ գովելի են ինչպես ուսումնասիրողները՝ իրենց ջանքի և գիտությունը ուրիշ ազգերից ձեռք բերելու համար, նույնքան և ավելի նրանք, որոնք գիտության այսպիսի գյուտերն ընդունեցին և պատվեցին: Այս պատճառով ես շեմ տատանվում՝ ամբողջ Հունաստանը գիտության մայր կամ դայակ կոչել:

(Գիրք առաջին, Բ):

Որովհետև թեպետ մենք փոքր ածու¹ ենք և շատ սահմանափակ քվով և շատ անգամ օտար քաղալորության տակ նվանված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի, որ նրանցից ոչ ոք հոգ չտարավ գրի առնելու:

(Գիրք առաջին, Գ):

¹ Ածու.—այստեղ՝ ազգ:

Եւ այս յայտնի է ամենեցուն, զի դժուարահաւաք և աւ-
ժանելի է որպէս զհիտ ժամանակացն ի սկզբանէ մինչև առ
մեզ՝ առաւել ևս զհիտ նախարարականաց ազգաց ծննդոց յե-
րից որդւոցն Նոյի, ցորհան կամք իցեն խուզել ումեք ըստ
իւրաքանչիւր դարուց: Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ
զիրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելից զայլոցն
իբր զարհամարհելեացն և իւրոց անարժան կարգելոց բա-
նից: Զորոց մեք սկսեալ նառեսցուք՝ որքան է կարողութիւն,
որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով
մասամբ ամենեկին անսուտ:

(Գիրք առաջին, Ե):

Զհաւաստին որչափ կարացեալ ի բազմացն ընտրեալ
բանից՝ կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի ցԱբրահամ
և ցՆինոս և ցՄերամ. որում ոչ զոք ընդդիմեալ կարծեմ ի
միտս ունողացն. բայց եթէ զնշմարտութեանն ոք խորհելով
փակել զոն՝ յառասպելս զնշմարտութեանս ախորժելով փո-
փոխել փութացէ: Եւ յայտոսիկ իւրաքանչիւր միտք որպէս
կամին՝ ուրախացին:

(Գիրք առաջին, Զ):

Զի եթէ զամենայն եղեալսն յաշտարակագործութենէն
մինչև առ մեզ ի հաստողութիւն քեզ ի մերումս ածել շանաս-
ցուք պատմութեան, Ե՞րբ ապա յըղծալին քո հասանիցեմք
զրուցաց պատմութիւնն. մանաւանդ զի և առաջիկայս մեր
երկար է գործ, և ժամանակ մահկանացուաց սուղ և անյայտ:
Այլ սկսեալ ցուցից քեզ զմեքն, թէ ուստի՛ և որպէ՛ս:

(Գիրք առաջին, Է):

Սկ այս հայտնի է ամենին, քե դժվարագյուտ և տա-
ժանելի է ժամանակագրություն կազմելը սկզբից մինչև մեր
ժամանակները, մանավանդ որոշելը նախարարական ցեղերի
սերումը նոյի երեք որդիներից: Մանավանդ որ սուրբ գիրքը,
յուրայիններին զատելով իբրև իր սեփական ազգ, մյուսնե-
րին լինց՝ իբրև արհամարհելի և իր կողմից նշանակվելու
անարժան (ազգերի): Մրանցից սկսելով մենք կնտենք, որ-
քան կարողություն ունենք, ինչպես որ հավաստին գտանք
հին պատմությունների մեջ, որոնք ըստ մեզ կատարելապես
նշմարիտ են:

(Գիրք առաջին, Ե):

Ի՞նչպիսիք գրվածքներից ընտրելով հավաստին, որ-
քան կարողացանք, նշանակեցինք նոյի երեք որդիների սե-
րունդները մինչև Աբրահամ, մինչև Նիեոս և մինչև Արամ,
որին, կարծում եմ, խելացի մարդկանցից ոչ ոք չի հակա-
ռակի, եթե միայն մարդ չցանկանա, նշմարտության ոնք
խանգարելով, նշմարիտ պատմությունները առասպելների
վերածել: Այս դեպքում բոլ ամեն մի միտք ուրախանա՝ ինչ-
պես կամենա:

(Գիրք առաջին, Զ):

Որովհետև եթե աշտարակաշինությունից սկսած մինչև
ներկա ժամանակներս պատահած բոլոր բաները ջանանք մեջ
բերել մեր պատմության մեջ ի գիտություն քեզ, ապա ե՞րբ
կհասնենք քո ցանկացած պատմական գրայցներին, մա-
նավանդ որ մեր առաջիկա գործը երկար է, իսկ մանկանա-
ցուների ժամանակը կարն է և անհայտ: Ուստի կսկսեմ քեզ
ցույց տալ մեր (պատմությունը), քե որտեղի՞ց և ինչպե՞ս
(սկսվեց):

(Գիրք առաջին, Է):

...և այլ որչափ միտք քո և քաջութիւն հասանիցեն. զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իբրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի:

(Գիրք առաջին, Ը):

Թէ քո Շարայի որկորն է՝ ասեն, Մեր Շիրակայ ամբարքն շեն:

(Գիրք առաջին, ԺԲ):

Սա (Հայկեան Արամ) այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան քէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց:

(Գիրք առաջին, ԺԳ):

Իսկ առ այսոքիւք և առասպելք աշխարհիս մերոյ զբազմամուտ Ասորին արդարացուցանեն՝ աստ ուրեմն զմահն ասել Շամիրամայ, և զհետևակ փախուստն, և զպսաւմունն և զիղձս ջրոյն և զարբումնն, այլ և ի մօտ հասանել սուսերատրաց՝ և զյուտութսն ի ծով, և քան ի նմանէ. «Ուլունք Շամիրամայ ի ծով»:

(Գիրք առաջին, ԺԸ):

...և էլի՝ որքան քո միտքն ու քաջությունը կհասնեն,
որովհետև, ասում է, քաջերի սահմանը նրանց զենքն է,
որքան կկտրի, այնքան էլ կտիրի:

(Գիրք առաջին, Ը):

Գու, ասում են, Շարայի որկորն ունես, բայց մենք Շի-
րակի ամբարները շունենք:

(Գիրք առաջին, ԺԲ):

Սա (Հայկյան Արամը) աշխատասեր և հայրենասեր
մարդ լինելով, ինչպես ցույց է տալիս պատմագիրը, լավ էր
համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչ-
պես օտարացեղ ազգեր ոտնակոխ են անում իր հայրենիքի
սահմանները, և օտարները տիրում են իր արյունակից հա-
րազատների վրա:

(Գիրք առաջին, ԺԳ):

Բացի դրանից, մեր աշխարհի առասպելներն էլ արդա-
րացնում են բազմահմուտ ասորուն, թե այստեղ է պատա-
հել Շամիրամի մահը, նրա հետիոտն փախչելը, ծարավելը,
ջրի պապակելը, այլև՝ սուներավորների մոտենալիս հուռուր-
ների ծովը նետելը և նրա ասած խոսքը. «Ուլունք Շամիրա-
մա ի ծով»:

(Գիրք առաջին, ԺԸ):

Թողլով գոչ կարևորագույնսն ի բանից՝ ասացուի որ ինչ հարկատրն է: ...Եւ այժմ անա զուարեացայց, ոչ վնօր ինչ կրելով խնդութուն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնայն սերունդի ի բազաւորութեան հասանեն յաստինան: Վասն որոյ արժան է մեզ աստանօր մեծ գործ կատարել, և բազումս ասել առարկութիւնս նաոից. գորոց մեզէն իսկ զհիմունս այսպիսեաց բանից ընթեռնուլ արժանաւորեցաք ի շորս հազներգութիւնս, զարգասաւորին ի բանս և զիմաստնոյն իսկ և ի մէջ իմաստնոց իմաստնագունին:

(Գիրք առաջին, ԻԱ):

Ապա եթէ ասիցես, ուստի՞ մեզ և զնախնեացն մերոց զիտել զանուանս այսպէս, իսկ զբազմաց և զգործս՝ ասեմ: Ի հնոցն դիւանաց Քաղդէացոց, Ասորեստանեայց և Պարսից, վասն մտելոց անուանց և գործոց նոցա ի քառէս արհունի, իբրև գործակալաց և վերակացուաց աշխարհիս ի նոցանէ կացելոց և մեծաց կողմնակալաց:

(Գիրք առաջին, ԻԲ):

Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ բազաւորութիւն՝ վկայէ և Երեմիա մաքբարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի պատերազմ. «Հրամանաւ տուր, ասէ, Այրաբատեան բազաւորութեանն և Ասիւնագեան զընդին»: Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ բազաւորութեանն առ այնու ժամանակաւ:

(Գիրք առաջին, ԻԲ):

Բայց բողնելով դեպքերից ոչ կարևորները, ասենք ինչ որ հարկավորն է: ...Ահա խոյժմ էս զվարճանում եմ՝ ոչ թո՛ք ուրախություն զգալով, որ հասնում եմ լայն տեղը, երբ մեր բնիկ նախնիի սերունդները բազավորության աստիճանի են հասնում: Ուստի վայել է մեզ խոյտեղ մեծ գործ կատարել և շատ պատմական նաևեր գրել, որոնց հիմունքը մենք ինքներս արժանացանք կարգալու իմաստուն, իմաստունների մեջ իմաստունագոյն և բազմաթղյուն հեղինակի (Գավիթ Անհաղթի) չորս հազներգությունների մեջ:

(Գիրք առաջին, ԻԱ):

Բայց եթե հարցնես, թե քրտեղի՞ց մենք այսպես գիտենք մեր նախնիների անունները, այլև շատերի գործերը՝ կպատասխանեմ. Քաղղեացիների, Ասորեստանցիների և Պարսից հին դիվաններից, որովհետև մեր } (նահապետները) նրանց գործակալները և նրանցից մեր աշխարհի վրա նշանակված վերակացուներն ու մեծ կողմնակալները լինելով՝ նրանց անուններն ու գործերը մուծվել են յարժունի գրքերի մեջ:

(Գիրք առաջին, ԻԱ):

Եվ որ այդ ժամանակները մեր ազգը բազավորության ուներ, սրա մասին վկայում է Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Թաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով. «Հրաման տուր, ասում է նա, Այրարատյան բազավորությանը և Ասֆանազյան գնդին»: Սա յապացույց է, որ այդ ժամանակ մենք ունեցել ենք բազավորություն:

(Գիրք առաջին, ԻԲ):

Քայց անցցոմ այսոմեակ որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նմանէ գործի: Քանզի սա լամենեցունց քազաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանց այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և կիրոսի խշակցեալ, զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեալ լնուանեալ հնազանդէր: Եւ զսանմածս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասարակացանէր յեզերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկնեացս բոճալի ինքն և ժամանակ իւր:

Զի ո՞ր ոք ի նշմարիտ արանց, և որոց ի բարս արութեան և խոհականութեան սիրելութիւն կայցէ, սորա յիշատակօքն ոչ գուարեացի, և յորդորեացի այսպիսի այր լինել: Արանց կացեալ գլուխ և արարիւն ցուցեալ՝ զագգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մքերքս ոսկոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունից և անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որով տգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք, և զեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիցազնացեալք: Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձերոց բեռեալք, և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարծածկեալք: Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուոց փայլմունք և շողիւնք՝ զբշնամիսն արտահալածել: Խաղաղութեան և շինութեան

Անցնենք այսուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Ռոմլինեան սա մեր բազավորներից ամենահզորն ու ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջը: Նա Կյուրոսին աջակից եղավ Մարաց իշխանությունը տապալելու, հույներին էլ ոչ միշտ ժամանակ նվաճելով իրեն հնազանդեցրեց և մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր իր ժամանակակիցներին ձախանձելի եղավ, իսկ հետո Եկոզներին ցանկալի թե՛ ինքր և թե՛ իր ժամանակը:

Եվ ո՛ր իսկական մարդը, ու համակրում է արիական բարբի և խոհականության, շի զվարեանա սրա հիշատակությանմբ և շի ձգտի ճրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ (օտարների) լծի տակ էինք, դարձան, պարսերով կոլոդները՝ հաջող աղեղնավորներ, դամբեբներ ոսկու և արծաթի, և պատվական քարերի, և զգեստների, և զանազան գույների և գործվածքների՝ տղամարդկանց և կանանց համար՝ առհասարակ բազմացրեց, որոնցով տգեղները գեղեցիկների նման սքանչելի էին երեվում, իսկ գեղեցիկներն այն ժամանակի համեմատ դյուցազունների էին նմանվում: Հետևակ կոլոդները ձիավոր դարձան, պարսերով կոլոդները՝ հաջող աղեղնավորներ, դա՛գանակներով, կոլոդները զինվեցին սերով ու թեգավոր նիզակներով. մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հա-

բերող, իպով և մեղու զամենայն հասակ պարարեալ:

Զայս և որ այլ աշխարհիք բազումք, երբ մերոյ աշխարհիս խարտեաշս այս և աղերեկ ծայրիս հերաց Յրուանդեան Տիգրան, երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և բիկնաւէտն, խոզաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս, և ի խրախնանութիւնս օրինաւոր. գորմէ ասէին ի հինսն մեր, որք յիանդաւմքն երգէին, լինել սմա և ի ցանկութիւնս մարմնոյ շափաւոր, մեծիմաստ և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան՝ պիտանի: Եւ զի՞նչ ինձ ի գիրսս յայտսիկ յարդեօք իցէ բան սիրելի, քան թէ որ յաղագս սորա էին գովեստք և պատմութիւնք յերկարել: Արդարադատ և հաասարասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրով զկենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր: Ո՛չ ընդ լաւագոյնսն խանդայր, և ոչ զնուաստսն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զսնամոցն իւրոց ի վերայ տարածանել զգգեստս:

(Գիրք առաջին, ԻԳ):

Քանզի ոչ ինչ առ բշնամեացն զգուշութիւն վեհագոյն քերէ օգնականութիւն, և ծանօթութիւն նոցայցն առաջի արկելոց գործոց՝ քան թէ որ ի ձեռն սիրով դաւելոյն զկորուստ խորհեսցի: Եւ զայս դարձեալ ոչ ի ձեռն քանձուց, և ոչ ի ձեռն բանից պատրողաց այժմ մեզ հնարաւորութիւն է կատարել, եթէ ոչ որպէս կամք են ինձ այժմ գործել:

(Գիրք առաջին, ԻԷ):

լածելու և վանելու: Նա խաղաղոտը և շենություն բե-
րեց, բուրիւն լիացրեց յուրով և մեղրով:

Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխար-
հին այս խառայաշ և մագերի ծայրը գանգուր երվանդյան
Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունք-
ներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և քիկնավեա, կե-
րակութեան և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախություն-
ների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փան-
դիւններով երգում էին, ասում էին, թէ մարմնի ցանկություն-
ների մեջ էլ շափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և
լի բուր (հատկություններով), որ պիտանի են մարդուն:
Եվ այս գրեում ի՞նչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին
եղած գովեստներն ու պատմությունը երկարել: Նա ամեն
բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեոք ունենալով՝
ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նա-
խանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին,
այլ աշխատում էր բնդհանրապես ամենքի վրա տարածել իր
խնամքի զգեստը:

(Գիրք առաջին, ԻԴ):

Որովհետև թշնամիներից զգուշանալու և նրանց մտադ-
րություններին ծանոթանալու համար ոչ մի բան այնքան
մեծ օգնություն չի բերում, քան երբ մեկը (թշնամուն) կա-
րուստ պատրաստի՝ սիրո միջոցով նրան դավելով: Եվ այս
ամենը մենք այժմ հնարավորություն չունենք կատարելու
ո՛չ գանձերի միջոցով և ո՛չ պատրողական խոսքերով, այլ
միայն այն կերպով, որ ես մտադիր եմ գործադրել:

(Գիրք առաջին, ԻԷ):

A I
1927



Վասն որոյ ես սիրեմ կոչել այսպէս ըստ փառութեան՝
Հայկ, Արամ, Տիգրան, ֆանգի ըստ փառացն՝ ազգ փառք.
Իսկ միջոցն՝ որպէս դէպ ումեմ բուիցի կոչել: Բայց ըստ
դիցարանութեանն կարծեաց՝ նշմարիտ է և ասելս մեր:

(Գիրք առաջին, ԼԱ):

Սրկուի այսոքիկ են, որք աշխատութիւն տագնապաւ
մեզ ի վերայ ի փումմէդ հասուցանեն հարցասիրութենէ-հա-
մառոտասիրութիւն, արագաբանութիւն. և այսոքիկ՝ պերնք
և պայծառք, պղատունականք իբր եղանել բանք. հեռի ի
ստութենէ, և լի որ ինչ ընդդէմ ստութեան. և զայսոսիկ յա-
ռաջին մարդոյն մինչև ցֆեզ առ ժամայն պատմել: Եւ այսո-
ցիկ ի միասին պատահել անննարին է: Քանզի որ զամե-
նայն կացուցանել՝ ոչ այսպէս հաստատէ, այլ ատուս ոքոջէ
և կարգս ի ստեղծուածս. ֆանգի են ոմանք առաջնոյ և ո-
մանք երկրորդի և երրորդի և այլոցն ատուց ստեղծուածք:
Եւ այսու մեզ այսպիսի իմն ռկնարկէ կարգս վարդապետու-
թիւն Հոգւոյն:

(Գիրք առաջին, ԼԲ):

Նա (Բիւրասպի Ածղահակ)... ասէր՝ ոչ ինչ իւր անան-
ծին պմեմ ունել պարտ է, այլ հասարակաց: Եւ ամենայն
ինչ նորա յայտնի էր բան և գործ. և ի ծածուկ ինչ ոչ խոր-
հէր, այլ զամենայն յանդիման արտաքս բերէր լեզուաւ զծա-
ծուկս սրտին: Եւ զել և զմտտ բարեկամացն որպէս ի տու-
րնջեան նոյնպէս և ի գիշերի սահմանէր:

(Գիրք առաջին, ԼԲ):

Ոստի ես սիրում եմ ըստ փառության այսպես կոչել՝
Հայկ, Արամ, Տիգրան. որովհետև փառքի սերունդները փա-
ռքերն են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես ուզում է՝
բող կոչի: Քայց դիցաբանական տեսակետից ևս նշմարիտ
է մեր ասածը:

(Գիրք առաջին, ԼԱ):

Այս երկու (պայմաններն) են, որ քո հարցասիրության
շնորհիվ մեզ տագնապ և նեղություն են պատճառում՝ հա-
մառոտաբանություն, արագաբանություն, այն էլ պերն ու
պայծառ, ինչպես պլատոնական խոսքերը, ստությունից հե-
ռու՝ և լի նշմարտությամբ, այս կերպով քեզ մի անգամից
պատմել առաջին մարդուց սկսած մինչև քեզ: Քայց այս բո-
լորը միասին չի կարող պատահել: Որովհետև (աստված),
որ ամեն բան ստեղծեց, նա, որ կարող էր մի ակնկալու-
թյամբ մի ակնբարբոս ամեն ինչ գոյացնել՝ այսպես շարեց,
այլ օրեր որոշեց և ստեղծվածների մեջ կարգեր, որովհետև
մի ֆանիսն առաջին օրվա ստեղծվածներն են, մի ֆանիսը՝
երկրորդի, երրորդի և հաջորդ օրերի: Եվ ս. հոգին այս վար-
պետությամբ մեզ սովորեցնում է նույնպիսի կարգեր պահ-
պանել:

(Գիրք առաջին, ԼԲ):

Նա (Բյուրասպի Ածղահակը) ասում էր, քե ոչ ոք չպետք
է առանձին (սեփական) բան ունենա, այլ ամեն ինչ բնդհա-
նուր պետք է լինի: Նրա ամեն մի խոսքը, ամեն մի գործը
հայտնի էր. ոչ մի բան ծածուկ չէր մտածում, այլ սրտի բո-
լոր գաղտնի խորհուրդները լեզվովն արտահայտում էր. և
սահմանում էր, որ բարեկամները նրա մտա ելևմտա անեն
ինչպես ցերեկով, այնպես էլ գիշերը:

(Գիրք առաջին, ԼԲ):

(Վաղարշակ) հրաման տայ՝ և ֆաղափացեաց մարդկան
արգոյ և պատիւ լինել առանել քան զգեղջկաց. և գեղջկաց
պատուել զֆաղափացիս որպէս զիշխանս. և ֆաղափացեաց
մի՛ կարի առ գեղջկօքն պերնանալ, այլ եղբայրաբար վա-
րիլ, վասն բարեկարգութեան և աննախանձութեան կենաց, որ է
շինութեան և խաղաղութեան կենաց պատեանք. և որ ինչ
նման այսոցիկ:

(Գիրք երկրորդ, Ը):

Իսկ Կրիստոսի յիշեալ զքանս Սողոմնի Աթենացոյ, ասէր
յիւր լեզուն. «Ո՛վ Սողոմ, Սողոմ, գեղեցիկս բարբառեցար,
ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան»:

(Գիրք երկրորդ, ԺԳ):

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տե-
սեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. Զի որք տեսանեն
զիս՝ ոչ հաւատացեն յիս, և որք ոչն տեսանեն՝ հոգա հա-
ւատացեն և կեցցեն:

(Գիրք երկրորդ, ԼԲ):

Սւ արդ այսուհետև եթէ ոչ լինիցի Աստուած հաճոյ մարդոյն՝
Աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայսմանէ՝ մարդոյն
արժան է քան զԱստուածն:

(Գիրք երկրորդ, ԼԳ):

Զի ախորժելի է ինձ՝ զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝
լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգոյ:

(Գիրք երկրորդ, ԼԴ):

(Վաղարշակը) հրաման է տալիս, որ ֆաղաֆացիների հարգն ու պատիվը ավելի լինի, քան գյուղացիներինը, որ գյուղացիները պատվեն ֆաղաֆացիներին, ինչպես իշխանների, բայց որ ֆաղաֆացիները շատ չգոռոզանան գյուղացիների մոտ, այլ եղբայրաբար վարվեն, բարեկարգությամբ և առնձախանձ կյանքի համար, որ հիմք է կազմում շինության և խաղաղ կյանքի,— և ուրիշ նման բաներ:

(Գիրք երկրորդ, Ը):

Իսկ Կրեստը, հիշելով Արեւնացի Սողոմի խոսքերը, իր լեզվով բացականչեց. «Ո՛վ Սողոմ, Սողոմ, դու գեղեցիկ խաւսեցի՞ր, թե չի կարելի մարդու բարեբախտությանը երանի առաջ մինչև նրա մահը»:

(Գիրք երկրորդ, ԺԳ):

Նեանի նրան, ով ինձ հաւատում է, թեպետ տեսած չլինի, որովհետև իմ մասին այսպես է գրված, թե որոնք ինձ տեսնում են, ինձ չեն հավատա, իսկ որոնք չեն տեսնում, կհավատան և կյանք կգտնեն:

(Գիրք երկրորդ, ԼԲ):

Ուրեմն այսուհետև եթե աստված մարդուն հանելի չլինի, էլ չի կարող աստված լինել, և այստեղից (հետևում է), թե մարդուն է վայելում աստծուն նվիրագործել:

(Գիրք երկրորդ, ԼԳ):

Որովհետև ինձ ախորժելի է, որ դուք՝ մարմնով իմ ազգակաճաններս, նաև հոգով իմ մտերիմ հարազատները լինեք:

(Գիրք երկրորդ, ԼԴ):

Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին՝
Նրուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Նրուանդ գեղե-
ցիկ և շինաղ յօրինուածով: Քանզի զմիջոց հովտին մեծի
լնու մարդկութեամբ և պայծառ շինուածով, լուսաւոր ու-
պէս ական բիր: Իսկ շուրջ մարդկութեամբն՝ ծաղկոցաց և
հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբոլն գայլ բոլո-
րակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր
գարտեանանց խիտ և գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կող-
մանն զիր կարակնաձև՝ արդարև գեղաբո՛ւ կուսից յօնից
դարաւանդաց համեմատ: Իսկ հարաւոյ հարթութիւն զաշ-
տաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բե-
րանացեալ դարաւանդօք ափանցն՝ գերկրերթիսն նշանակէ
շրթունս:

(Գիրք Երկրորդ, ԽԲ):

Բայց ասեն զՆրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ՝ ական
հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աշալրջացն՝ սովո-
րութիւն ունել սպասաւորացն արժունի՝ վէմս որձաբարեանյս
ունել ընդդէմ Նրուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ
ասեն պայթել որձաբար վիմացն: Բայց այս կամ եղիցի
սքոտ և առասպել, և կամ զիւականս ինչ առ իւր ունել զօրու-
թիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ գորս
կամի:

(Գիրք Երկրորդ, ԽԲ):

Իսկ Նրուանդ առասել ևս յորդագոյն տայր գպարգեսն,
և բաշխէր միոյ միոյ ումեք ի նոցանէ զգանձսն. և որչափ
շատ տայր՝ շատ ևս ատելի լինէր: Քանզի գիտէին ամեն-

Ինձ ֆաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ գառտակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և շքեղ հորինվածքով: Ռոմիկեստև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիրը, իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկոցներ և բուրաստաններ, ինչպես բքի շուրջը աչքի մյուս բուրակը: Իսկ այգիների բազմությունը նմանվում է խիտ արտևանումների գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարածև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (նիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գեան իր երկու ավերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով:

(Գիրք երկրորդ, ԽԲ):

Քայց Երվանդի մասին ասում են, թե հմայքով շար աչք ուներ, որի պատճառով արհունի սպասավորները սովորություն են ունեցել առավոտյան արշալույսը բացվելիս որձաֆաբեր բռնել Երվանդի առաջ, որի հայացքի շարությունից այդ որձաֆաբերը, ասում են, պայթելիս են եղել: Սակայն այդ բանը կամ սուտ է և առասպել, կամ թե ինչ-որ դիվական զորություն է ունեցել, որպեսզի այսպես, շար աչքի անունով, վնասի, ում որ կամենա:

(Գիրք երկրորդ, ԽԲ):

Իսկ Երվանդն ավելի առատացնում էր պարգևները և ամեն մեկին բաժանում էր գանձերը. և որքան շատ էր տալիս, այնքան ավելի ատելի էր դառնում, որովհետև բուրն էլ

ֆեան, եթէ ոչ առ առատութեան տայր, այլ առ երկիւղի վատնէ: Եւ ոչ այնչափ սիրելի զայնոսիկ աննէր, որոց շատն տայր, քան թէ թշնամի զայնս՝ որոց ոչն տայր պերնագոյնս:

(Գիրք երկրորդ, ԽԵ):

Եւ Սմբատ հրամայէր զվողսն պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ զնատակն իւր՝ իբրև զարծուի յերամս կախաուց խոյանայր:

(Գիրք երկրորդ, ԽԶ):

«Զի վասն միոյ ֆինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն.
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել.
Եւ թշնամութիւն յախտենական
Ի մէջ երկոցունց ազգաց ֆաշաց հաստատել»:

(Գիրք երկրորդ, Մ):

«Եւ ուստի՞ տացէ ֆաշն Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիրս ի բիրուց
Ընդ ֆաշազգայ կոյս օրիորդիս Ալանաց»:

(Գիրք երկրորդ, Մ):

«Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիս
Ի հարսնութեան Սաթինկանն»:

(Գիրք երկրորդ, Մ):

գիտելին, թե առատաձեռնությունից չէ, որ տալիս է, այլ երկյուղից վատնում է: Եվ այնքան սիրելի չէր դարձնում նրանց, որոնց շատ էր տալիս, որքան թշնամի էր դարձնում նրանց, որոնց այնքան առատ չէր տալիս:

(Գիրք երկրորդ, ԽԵ):

Իսկ Սմբատը հրամայեց պղնձե փողերը հնչեցնել և, իր գորհի նակատն առաջ շարժելով, սլանում էր, ինչպես արժիվը կախավների երամի վրա:

(Գիրք երկրորդ, ԽԶ):

Գլուցագուններին վայել չէ մի քննի համար
Ուրիշ գլուցագունների ցեղը վերացնել,
Կամ ծառա դարձնելով՝ որպես սարուկ պահել
Եվ հավիտենական թշնամություն
Երկու քաջ ազգերի միջև հաստատել:

(Գիրք երկրորդ, Մ):

Եվ որտեղի՞ց քաջ Արտաշեսը պիտի տա
Հազար հազարներ ու բյուր բյուրեր
Քաջերի սերունդ այս կույսի՝
Ալանների արքայազն օրիորդի համար:

(Գիրք երկրորդ, Մ):

Արտաշեսի փեսայության ժամանակ ոսկի էր տեղում,
Սարենիկի հարսնության ժամանակ մարգարիտ էր տեղում:

(Գիրք երկրորդ, Մ):

Սիրելի է ինձ ասել և վասն առնն քաջին Սմբատայ-
ֆանգի արդարև ըստ առասպելին ոչ ինչ կարի հեռի ի նշմար-
տութենէն. որ ունէր հասակ անդամոց համեմատ քաջու-
քեանն, և առաքինութեան ոգոցն որսորդ, և գեղեցկութեան
ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով յաշտն՝
որպէս դրակոնտիկոն ի վերայ ոսկոյ և ի մէջ մարգարտայ
ծագէր. և ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամե-
նայնի, և տուչութիւն յաջողութեան ունէր ի մարտս անուն
քան զամենայն ոք:

(Գիրք երկրորդ, ՄԲ):

Իայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր-
անգործ յաշխարհիս Հայոց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային,
յաղագս շինութեան երկրիս:

(Գիրք երկրորդ, ՄԶ):

Քանզի բազում ինչ գործք յաուրս Արտաշիսի գործե-
ցան, վասն այնորիկ ի բազում նաոս կոտորեցաք, զի մի՛
երկայնութիւն բանից տաղտկութիւն ընթերցողացն լինիցի.
որոյ է վերջին նաոս այսպիսի ինչ, յիշատակել և զայլսն ևս
որ ինչ ի ժամանակս Արտաշիսի: Զի բէպէտ և այլն ամե-
նայն, զոր յիշատակեցաք յառաջագոյն նաոիցն, կարգք և
սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան ի Վաղարշակայ և
յայլոց առաջնոց թագաւորացն՝ այլ ի մեծամեծ արուեստից
և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և աս-
պատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ ու-
փոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք. զշարքոյց ասեմ և

Ինձ սիրելի է խոսել նաև քաջ Սմբատի մասին, որովհետև նա, համաձայն առասպելին, որ շատ հեռու չէ նշմարտությունից, ուներ իր քաջության համեմատ հասակ և անդամներ, իր առափնուքյամբ որսում էր հոգիներ, վայելչացած էր գեղեցիկ ալևոր մազերով, աչքերի մեջ փոփոխ նշանով, որ փայլում էր, ինչպես դրակոնտիկոն (ակնը)՝ ոսկու և մարգարտի մեջ (ազուցված)։ արագաշարժ և փոփոխ անձի և մարմնի հետ նա միաժամանակ զգույշ էր ամեն բանում, և բոլոր մարդկանցից ավելի հաջողության շնորհի ուներ պատերազմների մեջ:

(Գիրք երկրորդ, ՄԲ):

Քայց ասում են, թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, այնքան շենացել էր երկիրը:

(Գիրք երկրորդ, ՄԶ):

Որովհետև Արտաշեսի ժամանակ շատ գործեր կատարվեցին, ուստի մենք շատ գլուխների բաժանեցինք, որպեսզի խոսքի երկայնությունը ձանձրալի չդառնա բնօրհաններից։ այս վերջին գլուխն էլ նրա համար է, որ հիշատակենք Արտաշեսի ժամանակ կատարված մյուս գործերն էլ: Որովհետև թեպետ մեր նախորդ գլուխներում հիշատակված կարգերն ու գեղեցիկ սովորությունները սահմանվեցին Վաղարշակից և ուրիշ հին թագավորներից, քայց նրանք մեծամեծ արվեստներից ու գիտություններից զուրկ էին մնացել, ավելի կոզուպուսների և ասպատակությունների հետևելով, իսկ այնպիսի գիտությունների կամ անփույթ էին կամ ձեռնհաս չէին, ինչպես շաքաթներ, ամիսներ, տարվա շրջաններ (սահ-

գամաց և գտարեաց բոլորմանց: Քանզի ոչ այսպիսի ինչ
նանաչիւր առ նոսա, այլոց ազգաց վարելով... Եւ այս ամե-
նայն յօրինի յաւուրս Արտաշիսի:

(Գիրք Երկրորդ, ԾԹ):

Եւ գրէ, եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն
Արտաշիսի, սիրելի կանայք և հարնք և մտերիմ ծառայք: Եւ
ն'րայիսի շուրջ բազմադիմիս արարին առ ի պատրի: Պիտոյն,
հաղափականաց կարգօք և ոչ որպէս զբարբարոսս:

(Գիրք Երկրորդ, Կ):

Ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին. ըստ
օրինի հեքանոսաց. դժուարի, ասեն, Արտաւագդ՝ պսելով
ցնայրն.

«Մինչ դու գնացեր,

Եւ գերկիրս ամենայն ընդ հեզ տարար,

Նս անբակացս ո՞ւմ թագաւորեմ»:

(Գիրք Երկրորդ, ԿԱ):

Եւ գայս նոյն երգիչքն յառասպելին ասեն այսպէս. եթէ
«Վիշապագունք գողացան գմանուկն Արտաւագդ,
Եւ դէ փոխանակ եղին»: Բայց ինձ արդարացեալ բոլի յուրն
այն, թէ ի ծննդեանն և եթ մոլութեամբ լեալ, մինչև նովիմք
և վախնանեցաւ:

(Գիրք Երկրորդ, ԿԱ):

մանեւր). նրանք այսպիսի բաներ չգիտեին, այլ գործածում էին ուրիշ ազգերինը: ...Այս բոլորը սահմանվեցին Արտաշեսի ժամանակ:

(Գիրք Երկրորդ, ՄԹ):

Եւ (Արիստոնը) գում է, թե որքան բազմաւայտն մեծով Արտաշեսի մահվան ժամանակ՝ նրա սիրելի կանայք, հարները և մտերիմ ծառաները, և ինչպես բազմատեսակ շէնդ պատիվներ մատուցեցին դիակին, քաղաքակիրք (ազգերի) կարգով և ոչ թե բարբարոսների նման:

(Գիրք Երկրորդ, Կ):

Արտաշեսի մահվան ժամանակ, հեթանոսական սովորոյթամբ, շատ կոտորածներ էին լինում. սրա վրա, ասում են, Արտավազդը նեղանում է և ասում է հորը.

Մինչ դու գնացիր

Եւ ամբողջ երկիրը քեզ հետ տարար,

Եւ ավերակների վրա ո՞ւմ քաղավորեմ:

(Գիրք Երկրորդ, ԿԱ):

Այս մասին նույն երգիչներն առասպելի մեջ այսպես են ասում.

Վիշապագունները մանուկ Արտավազդին գողացան

Եւ նրա տեղը դե դրին:

Բայց ինձ նշմարիտ է թվում այն լուրը, թե նա ծննդից ի վեր մոլությամբ է ապրել, մինչև որ նույն մոլությամբ մեռել է:

(Գիրք Երկրորդ, ԿԱ):

Աի որչափ էր հնար՝ փախեալ յաւելորդ և ի պանունեալ բանից, և որ ինչ յանհաւաստին հայէր բանն և մտածութիւնն. միայն զհետ երթալով ըստ կարողութեան՝ որ ինչ այլուստ և կամ ի մէնջ՝ զարդարոյն և զնշմարտի: Անոյն և աստանօր պատարաստելով՝ արգելում զընթացս բանիցս յոչ պատշանէն և որ զանհաւաստութեանն ի ներքս ածել ակնարկէ կարծիս: Եւ զհեզ, որպէս բազում անգամ, և այժմ աղաչեմ, մի՛ յաւելորդսն հարկատրել զմեզ, և սակաւ և կամ յոլով բանիւք՝ զմեծ և զհաւաստի բովանդակ աշխատութիւնս մեր ընդ վայր և աւելորդ ցուցանել զործ. զի նմանագոյնս որպէս ինն՝ և հեզ զործէ վտանգս:

(Գիրք երկրորդ, ԿԳ):

Սա թագաւորեալ ամսս քսան, մեռաւ: Թէ լոկ և այլքն կեցին, բայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլագոյնս ի թագաւորացն:

(Գիրք երկրորդ, ԿԵ):

Քայց մի՛ աստանօր բամբասեցես զմեզ իբրև զաւելագործ ոք, որպէս թէ զմի անգամ պատմեալսն դարձեալ ասացաք. այլ գիտե՛ա, զի ախորժելով վասն ազգականաց մերոյ Լուսաւորչին քաջահմուտ կամեցեալ լինել ընթերցողացն՝ կրկնագրեցաք երկրորդելով:

(Գիրք երկրորդ, ԿԶ):

Այլ մեք ասացում միայն զստոյցն, որ ինչ նշմարտութեանն վայել է պատմութիւն:

(Գիրք երկրորդ, Է):

Որովհետև մենք, որքան հնար էր, խուսափեցինք սովորող ու պանունված խոսքերից, և ինչ որ անհավաստի գործ կամ կարծիք կար, միայն հետևելով արդարն ու նշմարիտք գրելու, ուրիշներից (օգտվելով) կամ մեզանից՝ որքան կարողություն ունեինք: Այստեղ էլ նույնպես վարվելով՝ խոսքիս ընթացքը կանգնեցնում եմ, երբ անպատշաճություն եմ նկատում կամ հավաստիության կողմից կասկածելի մի բան: Եվ քեզ էլ, ինչպես շատ անգամ, այժմ ևս աղաչում եմ, մեզ մի՛ հարկադրիր ավելորդ բաներ գրելու, (մի գուցե այդպիսի) քիչ կամ շատ պատմություններով մեր այս մեծ և հավաստի ամբողջ աշխատությունն անպետք ու ավելորդ մի գործ դառնա, որ հավասարապես վտանգ է և ինձ, և քեզ:

(Գիրք երկրորդ, ԿԳ):

Սա (Վաղարշը), բազավորելով քան տարի, մեռավ: Ուրիշները լոկ ապրել են, բայց ես ասում եմ, որ սա մահից հետո էլ ապրում է իր բարի անունով, քան շատերը քույր բազավորներից:

(Գիրք երկրորդ, ԿԵ):

Բայց դու այստեղ մեզ չբամբասես, իբրև ավելորդաբանի, որ մեր մի անգամ արդեն պատմածը նորից ասացինք: Բայց զիտցիր, որ մենք ցանկանալով, որ ընթերցողները լավ ծանոթություն ունենան մեր Լուսավորչի ազգականների մասին, այսորժեյով կրկնեցինք մեր ասածները:

(Գիրք երկրորդ, ԿԸ):

Մենք միայն ստույգը կգրենք, նշմարտության վայել պատմությունը:

(Գիրք երկրորդ, Զ):

Որք ոչ զպատիւն յինճեանս ձգէին, այլ պատիւն զնետ
նոցա՝ ընթացաւ, որպէս ուսուցանէ ինք Ագաթանգեղոս:

(Գիրք Երկրորդ, 2):

Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկ-
րի խաղաղասէր ասեն զոլ զազգն ճենաց՝ յանձն առնու առ-
նել զհաշտութիւն. ուստի յայտ իսկ է, երէ էն արդարեւ խա-
ղաղասէր և կենսասէր ազգն ճենաց:

(Գիրք Երկրորդ, 2Ա):

Քանզի ոչ է պատմութիւն նշմարիտ առանց ժամանակա-
գրութեան, վասն որոյ և մանրախուզիւ իննեալ՝ գտաք զքն-
գատրելն Տրդատայ յերրորդ ամի Գիւղեղեփանոսի, և զալ
այսր հանդերձ մեծաւ զօրու: Որոյ հասեալ ի Կեսարիա՝ յո-
լովք ի նախարարացն ընդ առաջ իննէին: Եւ եկեալ յաշ-
խարհս՝ գտանէ զժողայ սնուցեալ զհոյր իւր զտոսրովիդովստ,
և պահեալ զգանձսն ամրոցան հանդերձ յոյժ երկայնմտու-
թեամբ. քանզի էր արդարեւ համբերող, ժուժկալ և առաւել
իմաստուն. զի թէպէտ և ոչ ծանեաւ զնշմարտութիւնն յաղագս
Աստուծոյ, սակայն զստութիւն կոտցն գիտաց: Նոյնպէս էր
և սան նորա տոսրովիդովստ, կուսան համեստ որպէս զօրի-
նատր ոք, և ոչ ամենեկին ունել անդուռն բերան, նման այ-
լոց կանանց:

(Գիրք Երկրորդ, 2Բ):

Ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, ո՛րպէս անբաւ
ի նմանէ յերկիր անկեալ քաւալագլոր խաղային, օրինակ
իմն ի զեղեցիկ ցանցորդէ լի ձկամբք յերկիր քօթափեալ
ցանցոյն, կայտառէին յերեսս երկրին:

(Գիրք Երկրորդ, 2Ե):

Նրանք պատվի հետևից շէին ընկնում, այլ պատիվն էր
ձրանց հետևից գնում, ինչպես քեզ ասում է Ագաքանգեղոսը:

(Գիրք երկրորդ, Զ):

Նվ որովհետև, ինչպես ասում են, աշխարհիս երեսին
ապրող բոլոր ազգերից ամենախաղաղասերը ձենաց ազգն
է, (թագավորը) հաշտվում է: Մրանից էլ պարզ երևում է, որ
ձենաց ազգը հիրավի խաղաղասեր է և կենսասեր:

(Գիրք երկրորդ, ԶԱ):

Որովհետև պատմությունն առանց ժամանակագրության
ստույգ չէ, ուստի մանրամասն հետազոտությամբ գտանք,
որ Տրդատը թագավորել է Գիոկղեախանոսի երրորդ տարում
և այս կողմերն է եկել մեծ զորքով: Նրբ նա Կեսարիա հա-
սավ, նախարարներից շատերը նրան ընդառաջ գնացին: Նվ
երբ հասավ մեր աշխարհը, տեսավ, որ Օտան սնուցել է իր
խոսրովիդովստ ֆրոջը և պահպանել է գանձերն ու ամրոցը
մեծ համբերությամբ. և իսկապես էլ նա համբերող էր,
ժուժկալ և շատ խելացի, որովհետև նա քեպետ աստծու մա-
սին նշմարտությունը չգիտցավ, բայց կուտֆերի ստությունը
հասկացավ: Նրա պես էր և նրա սանը՝ խոսրովիդովստը, մի
օրինավոր համեստ կույս և շուներ բուրովին անդուռն քե-
րան, ուրիշ կանանց նման:

(Գիրք երկրորդ, ԶԲ):

Չեմ կարող նկարագրել նրա (Տրդատի) ձեռքի արագու-
թյունը, քե ինչպես անհամար մարդիկ նրանից զարկվում,
թավալվում, գետին էին ընկնում, ինչպես հմուտ ձկնօրսի
ձկներով լիքը ցանցից ձկները գետին են թափվում ու վրիս-
տում հողի երեսին:

(Գիրք երկրորդ, ԶԵ):

Բայց զոր աստուածային բանն առ Երայեցիսն ան-
հնարին համարեալ, շարութեանն փոփոխումն՝ նոյն և աս-
տանօր պատանի. բնձու անկարելի է զխայտուցսն փոխել,
և Երովպացոյ զբխութիւն, նոյնպէս մարդոյ ամպարշտի
զբարսն:

(Գիրք Երկրորդ, 22):

Եւ ցրացեալ ի սիրոյն Տրդատայ մեր թագաւորի, ակ-
նածէր որպէս արդարև ի բշնամոյ. քանզի զիտէր եթէ
ատելի է արդարոյ ամենայն ամբարշտ:

(Գիրք Երկրորդ, 22):

Սա, որպէս ամենեցուն յայտնի է, աշխարհաւ Պարբև,
գաւառաւ Պահլաւ, յազգէ թագաւորեցելոյ գատուցեալ Արշա-
կունի, ի ցեղէ Սուրենական, ի հօրէ Անակ կոչեցելոյ, յարև-
լից կողմանց աշխարհիս մերոյ՝ արևելի նշմարիտ ծագեալ
մեզ և իմանալի արեգակն և հոգևոր նառագայթ, ի խորին
շարութենէ կոսպաշտութեան Ելի, Էրանութեան և շինու-
թեան հոգևորի առիթ, աստուածային արդարև արմատենի
տնկեալ ի տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղ-
կեալ: Եւ այսպիսեօք և այսքանեօք ժողովրդով բազմա-
ցեալ, ի ծերութիւն պարարտութեան հոգեւորի զմեզ ժողո-
վեաց ի փառս և ի գովեստ Աստուծոյ:

(Գիրք Երկրորդ, 23):

Զսրբոյ և զմեծէ և զերկրորդ նահատակէ և զմերոյ լու-
սաւորութեան հոգևոր վերակացուէ նառելով, զի Քրիստո-
սէ հանուրց եղելոցս նշմարիտ թագաւորէ՝ հրաշափառագոյ-
նի պարտ էր անցանել բանիւ, որպէս զգործակցէ և զհա-

Բայց ինչ որ աստվածային խոսքն ասում է եբրայեցիներին մասին, թե չարին անկարելի է փոխվել, նույնը պատահում է այստեղ. ինչպես որ անկարելի է ինձին իր խայտուցը փոխել և եթովպացուն՝ իր քիտրյունը, այսպես էլ (անկարելի է) ամբարիշտ մարդուն իր բարեք փոխել:

(Գիրք երկրորդ, 2Ը):

Նա (Լիկիանոսը) ցրտացավ սիրուց դեպի մեր Տրդատ քաղավորը և նրանից ակնածում էր ինչպես իսկական թշնամուց, որովհետև գիտեր, թե արդար մարդուն ատելի է ամեն մի ամբարիշտ:

(Գիրք երկրորդ, 2Ը):

Սա (Գրիգոր Լուսավորիչը), ինչպես ամենին հայտնի է, Պարթևական աշխարհից էր, Պանկավների գավառից, քաղավորող ցեղից գատված Արշակունի, Սուրենի ցեղից, Անակ անունով հորից. նա մեր աշխարհի արևելյան կողմերից մեզ նշմարիտ արևելք ծագեց և իմանալի արեգակ և հոգևոր նառագայք, կոապաշտության խոր շարությունից ելք, նշմարիտ բարի և դիվանակած, երանության և հոգևոր շինության առիթ, իսկապես աստվածային արմավենի, տիրոջ տանը տնկված և մեր աստծու գավթում ծաղկած: Նա այսպիսի և այսքան ժողովուրդներ բազմացրեց և մեզ պատրաստեց հոգևոր պարարտ ծերության և ի փառս և ի գովեստ աստծու:

(Գիրք երկրորդ, 2Ա):

Սուրբ և մեծ և երկրորդ նահատակի, մեր լուսավորության հոգևոր վերակացուի (Տրդատ քաղավորի) մասին նառելիս, — որովհետև Քրիստոսն է բոլոր գոյացությունների

ասար եզնողէ մերոյ նախաշաղի և լուսաւորութեանց նա-
հապետի. որպէս բունցաւ հանոյ Հոգւոյն սրբոյ՝ երիցուցա-
նել զիմ լուսաւորչին վկայութեանն միայնոյ վիճակաւ, ի
վերայ բերեմ՝ թէ և առաքելութեանն. իսկ որ ինչ զկնի այ-
սորիկ, զուգարան և հաւասարագործ: Այլ գառաւելութիւն
ասեմ աստ զքագաւորին. քանզի խորհելն յաղագս Աստուծոյ
և նզնագրեցիկն լինել՝ զոյգ երկոցունց. իսկ նուանել հաւա-
նողական կամ բռնաւորական բանի՝ առանկ էր քագաւորին
շնորհ. քանզի ըստ հաւատոցն ոչ ինչ կասեցուցանէր զգործ-
սրն: Այսորիկ աղագաւ կոչեմ և զսա նախաշաղիդ նանա-
պարհ և լուսաւորութեան մերոյ հայր երկրորդ:

(Գիրք երկրորդ, ՂԲ):

Եւ զի այսոքիկ նշմարիտ այսպէս՝ մխիթարեսցուի մե-
րով վտանգիւս և մեք. «զի եթէ ընդ փայտ դայար գայս
արարին, ասէ Քրիստոս, իսկ ընդ շորն զի՞նչ լինիցի»:

(Գիրք երկրորդ, ՂԲ):

Վասն որոյ իւրաքանչիւր ոք առանձին է քուրմ և պաշ-
տօնեայ, որպէս ասէ Գիր, որ է ըստ այժմուցս ի դէպ. ուր
բազում խօսողք աստուածայնոցն, և զօրութեան մտացն ոչ
հասուի. և խօսողք՝ ո՛չ ըստ հանոյիցն Հոգւոյն, այլ ըստ

նշմարիտ քաղաքորդ, — պետք էր հրաշափառ խոսքերով գրել, ինչպես մեր լուսավորության նախաշավիղին ու նահապետին հավասար նգնողի և նրա գործակցի մասին: Որովհետև սուրբ հոգուն հանո քվաց ավագություն տալ իմ լուսավորչին՝ միայն խոստովանողի, կավելացնեմ նաև առաջելության կոչումով, իսկ սրանից դուրս՝ (նրանք երկուսը) իրար հավասար են խոսքերով և գործով: Քայց այստեղ ես նկատում եմ քաղաքորդի առավելությունը, որովհետև ասածու մասին մտածելու և նգնողության մեջ նրանք երկուսը հավասար էին, իսկ համոզական կամ ստիպողական խոսքերով (նոր հավատին) հնազանդեցնելու մեջ՝ քաղաքորդ շնորհն ավելի էր, որովհետև նրա հավատից գործը հետ չէր մնում: Այս է պատճառը, որ ես նրան կոչում եմ նախաշավիղ նանապարհ և մեր լուսավորության երկրորդ հայր:

(Գիրք երկրորդ, ՂԲ):

Եվ որովհետև այս բոլորը նշմարիտ այսպես է, ապա և մենք մխիթարվենք մեր նեղությունների մեջ, «որովհետև երբ կանաչող ծառի հետ այսպես վարվեցին, ասում է Քրիստոսը, ապա չարին ի՞նչ կանեն»:

(Գիրք երկրորդ, ՂԲ):

Այս պատճառով ամեն մեկը իր համար առանձին փուրձ և պաշտոնյա, ինչպես ասում է ս. գիրքը, որ հարմար է գալիս ներկա պայմաններին, երբ շատերն են, որ խոսում են աստվածային նյութերի մասին, բայց առանց հասկանալու խնդրի էությունը, և խոսողները ոչ թե ս. հոգու հանույժով

օտարին: Վասն որոյ հիացումն իմն են նաոֆս և սարսափելի՝ որոց միտս ունին. Բանգի խօսի որ խօսին՝ զԱստուծոյ և զաստուածայինսն, և խորհուրդի խօսողին յօտարն հային: Զի ոչ վասն որոյ խօսին՝ կրէ զաշխատութիւն, և ոչ մեղմով և հեզիկ, որպէս ուսան, քէ «մի՛ ռֆ լուիցէ արուսեոյ զբարբառ նորա», այլ յաղագս փառաց մարդկայնոց, և հայրեցուցանելով հնչեցուցանեն ի լսելիս մարդկան: Ուր շատախօսութեանն հոսանք իբրև յաղբերէ դիմեն, որպէս ասաց ոմն ի հեռոցն, և զկծեցուցանեն զամենայն զինարբուս և զհրապարակս: Ո՞վ ռֆ զոսսա ոչ ողբացէ՝ որ միտս ունիցի. և եթէ ոչ ռֆ զշարիցի՝ ասեմ, քէ և ռֆ յորդորենն զոսսա այսպիսիս լինել:

(Գիրք երկրորդ, ԴԲ):

Այլ որչափ շան և յիշողութիւնք բանցին՝ պատմեցաք ստուգապէս ի մեծէն Աղեֆսանդրէ մինչև ի վախճան սրբոյն Տրդատայ, յոյժ կանուխ և հեռի ժամանակօք: Վասն որոյ մի՛ զմեզ այսպանեալ պարսաւեսցես. զի ահա որ ինչ առ մերով ժամանակաս եղեալ կամ դոյզն ինչ հեռի՝ զուցեցիք իեզ անսխալ, Երբորդ առնելով Գիրս, որ ինչ յետ սրբոյ Տրդատայ մինչև ի սպառել Արշակունեաց ազգին ի բազաւորութենէ, և զաակի սրբոյն Գրիգորի ի Բահանայապետութենէ. հասարակաց խօսիւք անցանելով ընդ պատմութիւնս, որպէս զի մի՛ ռֆ երեսցի ի պերնաբանութիւնս զրանալ առ փափագն, այլ նշմարտութեան բանից մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ և անյագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց:

(Հատած երրորդ, Ա):

են (ընտրված), այլ օտարի: Ուստի ապշեցուցիչ են այս նառերը և սարսափելի՝ մտածող մարդկանց համար. որովհետև խոսողը խոսում է աստծու և աստվածային նյութերի մասին, բայց խոսողի միտքն ուղղված է դեպի օտարը: Որովհետև նա հոգում է ոչ թե խոսած նյութի մասին և ոչ էլ խոսում է մեղմ ու հեզաբար, ինչպես որ պատվիրված է, թե «ոչ ոք դուրսը նրա ձայնը չլսի», այլ (հոգում է) մարդկային փառքի համար, և որոտագին հնչեցնում են մարդկանց լսելիքին: Նրանց շատախոսությունը հորդաբար հոսում է իբրև աղբյուրից, ինչպես ասաց հներից մեկը, և բորբոքեցնում են կոշունմներն ու հրապարակները: Ո՞ր մտածող մարդը չի ողբա դրանց մասին, այլև,—քող ոչ ոք չենդանա,—նրանց մասին, որ դրանց հորդորում էն սյսպէս լինել:

(Գիւրջ եր' րորդ. ՂԲ):

Այլ որքան ջանքն ու հիշողությունը բավականացան, մենք ստուգությամբ պատմեցինք Աղեֆսանդր Մեծից մինչև սուրբ Տրդատի մահը, շատ կանուխ և հին ժամանակի (անցները): Ուստի մեզ շպետ է մեղադրես ու պարսավես, որովհետև անա ինչ որ մեր ժամանակները կամ քիչ առաջ պատահել է, քեզ անսխալ կպատմեմ, երբորդ գիրքը գրելով, անցները սուրբ Տրդատից հետո մինչև Արշակունյաց ցեղի դադարելը բազավորությունից և սուրբ Գրիգորի սերնդինը՝ Բահանայապետությունից, հասարակ լեզվով այս պատմություններն անելով, որպեսզի այնպես շերեւ, թե մեկը փափագում է (կարդալու) պերնաբանությունից գրավելով, այլ մեր պատմածների նշմարտության կարոտելով՝ հանախակի և անդադար կարդան մեր հայրենիքի պատմությունը:

» (Հատած երրորդ, Ա):

ժողով արեալ եպիսկոպոսաց և համօրէն աշխարհակա-
նօժ, կանոնական սանմանադրութեամբ հաստատեաց գողոր-
մածութիւն, խլելով և զանգրութեանն արմատ, որ բնարար
սովորութեամբ էր յերկրիս մեռում:

(Հատած երրորդ, Ի):

Որով չափով չափեաց՝ չափեալ եղև ըստ Գրոց:

(Հատած երրորդ, ԻԲ):

Թէպէտ և Արշակ կարծեաց զանխոյ գործել զչարխն՝
այն որ ոչն ծածկի յամենատես ականէն Աստուծոյ, յայտնի
և աշխարհի, առ ի մեղուցելոց պակուցումն, որպէս զմահն
Տիրանայ և Գնելոյ:

(Հատած երրորդ, ԻԴ):

Քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տելոջ կոտել,
և կանանց գործ է արգելով փակել զինքեանս յերկիպէ առ
հանդերձեալ կոխան:

(Հատած երրորդ, ԻԸ):

Գարձեալ յարեալ խոովութիւն Շապհոյ ի նոյն ազգաց,
և խաղաղութիւնն ի Յոյնս շրջեցաւ, ըստ այնմ՝ թէ փոխար-
կեալ միմեանց փոխարինին. սոցա խաղաղութիւն ի նոցա
խոովութեանն, և նոցա խաղաղութիւն ի սոցա խոովութեանն,
որ վախնան միոյն՝ միսոյն լինին սկզբունք:

(Հատած երրորդ, ԻԹ):

Նա (ս. Ներսեսը) Եպիսկոպոսների և աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմաններով հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արավ անգորությունը, որ մեր երկրում ի բնե սովորական էր:

(Հատած երրորդ, Ի):

Ինչ չափով որ չափեց, նրանով էլ ինքը չափվեց, ինչպես ասված է ս. գրքում:

(Հատած երրորդ, ԻԲ):

Քե՛ն Արշակը կարծում էր, թե այդ չարիքները բաժնե գործեց, բայց ինչ որ շի ծածկվում աստծու ամենատես աչքից, հայտնի է դառնում և աշխարհին՝ հանցավորներին ի սարսափ, ինչպես Տիրանի և Գնեյի մահը:

(Հատած երրորդ, ԻԴ):

Քաջ տղամարդիկ կովում են արձակ դաշտում և ազատ տեղում, կանայք են, որ փակվում են՝ կովից վախենալով:

(Հատած երրորդ, ԻԸ):

Շապուհի համար դարձեալ խռովություններ ծագեցին հույն (հյուսիսային) ազգերից, իսկ խաղաղությունը շուտ եկավ հույների կողմը, համաձայն այն խոսքի, թե փոփոխակի իրար փոխարինում են, և սրանց խաղաղությունը նրանց խռովության մեջ է կայանում, իսկ նրանց խաղաղությունը՝ սրանց խռովության մեջ, այնպես որ մեկի վախնանք մյուսի սկիզբն է դառնում:

(Հատած երրորդ, ԻԹ):

Եւ ասէ. «Թէ դու ոչ խնայեցեր յազգայինսն մեր Կամսարականս, որ առաւել քան զիս էին քեզ հարազատագոյնն, դենի ձերոյ մասամբ և աշխարհաւ համարեալաւ, զի ա՛րդ յինէն ակն ունիցիս ի քեզ խնայել, հեռացեալ դենի և բնակութեամբ:

(Հատած երրորդ, ԼԴ):

Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն որպէս փոքորիկ յանտանէ տերեւաբափ, այնպէս երագ յերիվարացն առեալ նիզակօք, դի ցուտ յերկիր ընկեցնուին, ոչ կարելով նոցա յիրեանց նակատն մտանել:

(Հատած երրորդ, ԼԵ):

Յետ սպառելոյ պատերազմացն և խաղաղանալոյ երկրիս, մեծն Ներսէս դնէր վկայութիւն ի մէջ արքային Պապայ և ի մէջ նախարարացն՝ զնալ յամենայն նաճապարհս արդարութեան, զի վկայեցեն քստ հաւատոց քրիստոնէութեան և զարժնն:

(Հատած երրորդ, ԼԶ):

Թէպէտ և ձեր ոչ ազատաբար արարեալ՝ բողէք զիրաւանջիւր իշխանութիւնս, և մեզ ոչ ինչ նիազ էր ի ձէնչ, սակայն քստ տիրաբար խնամոց զքացաք ի ձեզ և յաշխարհդ ձեր, զմտաւ ածեալ, եթէ ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել, և հովիւք առանց բարիոք վերակացոյի:

(Հատած երրորդ, ԽԲ):

Եվ ասում է. «Երբ դու շխնայեցիր մեր ազգական Կամսարականներին, որոնք ինձանից ավելի մոտ հարազատներ էին քեզ, ձեր կրոնի կողմից և միևնույն աշխարհում բնակվելով, ինչպե՞ս կարող ես հուսալ, որ ես քեզ խնայեմ, որ՝ քեզանից հեռու եմ և՛ կրոնով, և՛ բնակությունով»:

(Հատած երրորդ, ԼԴ):

Երբ Պարսից պատանիները հետ էին դառնում, մեռանք անմիջապես հասնում էին նրանց հետևից և ինչպես փորորիկ, որ անտառը տերևաքափ է անում, այնպես էլ նրանք արագորեն նիզակներով նրանց վայր էին գցում ձիերից, դիակները գետնի երեսին փռում, և նրանք շէին կարողանում իրենց նակատամարտի մեջ մտնել:

(Հատած երրորդ, ԼԵ):

Երբ պատերազմները վերջացան, և երկիրը խաղաղվեց, մեծն ներսեսը ուխտ էր հաստատում Պապ քաղաքում և նախարարների մեջ, որպեսզի արդարության հանապարհով զնան, որպեսզի նրանց գործերը համապատասխան լինեն Բրիտանեական հավատին:

(Հատած երրորդ, ԼԶ):

Թեպետև դուք ազնվաբար շվարվեցիք և բողիք ձեր իշխանությունները, և քեպետ դրանից մեզ ոչ մի բան չպակասեց, բայց մենք իբրև տեր խնամելով՝ զբացինք ձեզ և ձեր աշխարհին, մտածելով, որ հոռը շի կարող առանց հովվի լինել, և հովիվներն առանց լավ վերակացուի:

(Հատած երրորդ, ԽԲ):

Սա սիրեաց զմիայնակեցութեան վարս. որպէս ասաց
ումն, քէ ի նաւահանգիստ փութայ նաւ խոռվեալ, և անձն
ժողովալ խնդրէ զանապատ. նոյնպէս և նորա փախուցեալ
յաշխարհական զբաղմանց, և ընկեցեալ յետս զմարմնական
պատիւն՝ զհետ ընթանայր երկնաւորին:

(Հատած երրորդ, Խէ):

Զի ոչ շրջին պարգիւք թագաւորաց առանց վնասու:

(Հատած երրորդ, ԽԸ):

Վասն որոյ մաղրեաց գրալ, իբր յաստուածային հրա-
մանէ՝ ոչ բառնալ որդոց զյանցանս հարց. մանաւանդ զի
հարին որք մեղանն՝ նոքին սակս այնր և մեռան:

(Հատած երրորդ, ՄԱ):

Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ
բարգմանեցին զմի անգամ քարգմանեալն փութանակի,
հանդերձ նոքոք վերստին յօրինեալ նորոգմամբ: Բայց քան-
զի անգէտք էին մերումս արուեստի՝ ի բազում մասանց բե-
րացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահա-
կայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեֆսանդրիա, ի լեզու
պանծալի, ի ստոյգ յօղանալ նեմարանին վերաբանութեան:

(Հատած երրորդ, ԿԱ):

Այլ նա ասէ. «Ինձ քաւ լիցի մատնել զայլոց զիմ մո-

Նա (Մեսրոպ Մաշտոցը) սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, քե ակեկոծված նավն շտապում է դեպի նավանանգիստը, իսկ ժուժկալ մարդը անասյառ է փնտրում: Այսպես էլ նա, աշխարհային գրադմունքներից փախչելով և դեռ գցելով մարմնական պատիվը, գնում էր երկնավորի հեռակից:

(Հատած երրորդ, ԽԷ):

Քանի որ քաղավորների պարզները հետ չեն առնվում, էրե հանցանք չեն գործել (ստացողները):

(Հատած երրորդ, ԽԸ):

(Ս. Սահակը) խնդրեց գրալ նրանց, ինչպես աստվածային հրամանն է, որ որդիները իրենց հայրերի հանցանքների համար չղաղվեն, մանավանդ որ հանցավոր հայրերը հենց իրենց հանցանքի համար մեռան:

(Հատած երրորդ, ՄԱ):

Մեծն Սահակն ու Մեսրոպը, բնդունելով (ս. գրքի օրինակը), նորից քարգմանեցին մի անգամ շտապովի բարգմանվածը, նրանց հետ միասին, նորից հորինելով ու նորոգելով: Բայց որովհետև նրանք մեր արվեստին տեղյակ չէին, ուստի գործը շատ կողմերից քերի էր դուրս գալիս: Այս պատճառով մեծն Սահակը և Մեսրոպը մեզ առան, ողորկեցին Աղեփսանդրիս, պանծալի լեզուն սովորելու, իսկական նեմարանում կատարելագործվելու:

(Հատած երրորդ, ԿԱ):

Բայց նա (Ս. Սահակը) ասում է. «Քալ լիցի, որ ես իմ մոլորված ոչխարը (Արտաշիւր քաղավորի մասին է—Գ. Թ.)

լորեալ ոչխարս, և ոչ պատել զքեկեալն կամ զհիւանդացեալն, այլ զանավէժ առնել: Զի եթէ էր հաւատցեալ բազաւրի առաջի՝ փութայի և ոչ յապեղէի, յուսալով զկանգնումն զլորելոյն. այլ հեթանոսաց, յառաւել կործանումն՝ ոչ առնում յանձն, ըստ այնմ՝ թէ մի՛ մատնէր գազանաց զանձն խոստովանող քեզ: Քանզի դրոշմեալ է աւագնան, թէպէտ և անառակ է, պոռնիկ է, այլ քրիստոնեայ է. զինացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգով. զեղիս է վարուի, այլ ոչ կրակապաշտ. տկար է ի կանայս, այլ ոչ ծառայէ տարեց: Եւ զիս՝ ըդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխարն ընդ առողջ գազանին, որոյ առողջութիւնն է մեզ պատահաս:

(Հատած երրորդ, 49):

Զիս՝ ըդ վասն սնափառութեան և իշխանաւորութեան շարափանիցեմ զընկերէ:

(Հատած երրորդ, 47):

Բայց թէ ասիցէ ոք, պարտ է մեզ գասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն զրել՝ զիտացէ, զի ոչ յումեմէ ի լսելիսս մեր հասեալ է բովանդակն նշմարտութեամբ, և ոչ մեք ի պատմութեանս հիսել հտանիմք: Զի և ես այր եմ ծերացեալ և հիւանդոտ և անպարսպ ի քարգմանութեանց, և զերագելն միայն խոկացի, ոչ ինչ մաքրագունից պարսպեալ բանից, զի և ին կամիդ կատարեսցին, և ես նողոպրեցայց ի ինոց հարկեցուցանող բանից և աղաչանաց. մարդ զքեզ վարկանելով, կարեկցութեամբ մեզ հաւասարեալ, և ոչ, որպէս քերթողքն ասեն, մերձագաւակի և մօտասերք գոլ և նոյնասերմանք աստուածոց՝ իշխանք:

(Հատած երրորդ, 46):

մատենեմ գայլերին, որ ես չպատեմ բեկվածին կամ հիվան-
դացածին, այլ գտնավեժ անեմ: Երե հավատացյալ քաղա-
վորի առաջ (պետք լինե՛ր գնալ), կվուրայի, շէի հապաղի,
հուսալով, թե զլորվածին ոտքի (կարելի է) կանգնեցնել,
բայց հեքանոսներին հանձնել, ավելի մեծ կործանման հա-
մար՝ հանձն չեմ առնում, համաձայն այն խոսքին, թե մի՛
մատնիր զազաններին մի անձ, որ խոստովանում է քեզ:
հրովհետև եա դրոշմված է ավազանով. թեպետ անառակ է,
պտռնիկ, բայց Բրիտանյա է. վարժով գելս է, բայց ոչ կրա-
կապաշտ. եա քուլուրյուն ունի դեպ կանայք, բայց տա-
րեբներին չի երկրպագում: Եվ ինչպե՞ս կարելի է այդ իմ
ախտավոր ոչխարը փոխել առողջ զազանի հետ, որի հենց
առողջությունը մեզ համար պատուհաս է»:

(Հատած երրորդ, 49):

Ես ինչպե՞ս կարող եմ բնկերոջ մասին շարախոսել փա-
ռասիրությունից կամ իշխանասիրությունից (դրոված):

(Հատած երրորդ, 49):

Բայց երե մեկն ասի, թե մենք պետք է գրեինք
մեծն Սահակի խոսածները Պարսից ատյանում, թող
եա գիտենա, որ ամբողջն իսկությունք մեր լսելիքին
չի հասել ոչ ոքից, ուստի և մենք չենք հոժարում
հյուսել այս պատմության մեջ: Որովհետև ես էլ
մի մարդ եմ ծերացած, հիվանդոտ և քարգմանություննե-
րից անպարապ. ես միտքս դրի միայն շտապել, առանց
խոսքի մաքրության հետևելու, որպեսզի քո կամքը կատար-
ված լինի, և ես ազատվեմ քո ստիպողական խոսքերից և

Զոր լուծալ նախարարացն և զիտացեալ, թէ յաստուածային հրամանէ դադարեաց յազգէ նորա քահանայապետութիւնն՝ յարտասուս հարեալ, աւաղելով զինքեանս ըստ Աւետարանին բանի, թէ Հարկ է գալ գայրակողութեանն, բայց վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցէ գայրակողութիւնն՝ թոյլ ետուն նմա:

(Հատած երրորդ, 42):

Յայնժամ հասեալ մեծին Սահակայ հիւանդութիւն մահու... Որ մահկանացու ծնեալ՝ անմահ զիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն, պատկանեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն. և այսքան կենցաղավարեաց՝ իբր ցն ոչ պակասութեան իրիք մասն ի ծերութենէն եղանիլ, և ոչ յախտից առընդունել: Զորմէ պարտ էր մեզ հրաշափառագունի անցանել բանի, ըստ արժանի սրբոյ հօրն դրուատից. այլ զի մի՛ յերկարութիւն նառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց՝ այլում տեղոյ և ժամանակի գայտսիկ թողցում, արտաբոյ այսց գրոց, ուր զսկզբանն հրափրեցաք առնել թելադրութիւն:

(Հատած երրորդ, 4է):

Յի զկնի վեց ամսոց անցելոց կատարման սրբոյն Սահակայ, յերեքտասանն մեհեկանի և երանելին Մեսրոպ յաշ-

աղաչանքներից. Բեզ էլ ես մարդ եմ համարում, կարիքների կողմից մեզ հավասար, և ոչ թե, ինչպես ֆերքողներն են ասում, որ իշխաններն ասավածների զարմից են, նրանց մերձավոր և սերնդակից:

(Հատած երրորդ, 45):

Նախարարները այս լսելով և հասկանալով, որ աստվածային հրամանով նրա (Ս. Սահակի) ցեղից քահանայապետությունը դադարեց, արտասվեցին, վայ տվին իրենց, համաձայն ավետարանի խոսքին, թե «Գայրակղությունը պետք է գա, բայց վա՛յ նրանց, որոնց ձեռնով կգա գայրակղությունը», և բողին նրա կամքին,

(Հատած երրորդ, 46):

Այն ժամանակ մեծն Սահակի վրա մահվան հիվանդություն հասավ... Որ մահկանացու ծնվելով՝ անմահ բողեց իր հիշատակը, պատվեց պատկերը, պատկառեց կոչումից, կյանքից կյանք փոխադրվեց և այնպես կենցաղավարեց այնքան տարի, որ ծերությունից ոչ մի տեսակ պակասություն չերեաց նրա վրա և ոչ էլ որևէ ախտի ենթարկվեց: Նրա մասին պետք էր փառավոր նառ գրել, դրվատել մեր սուրբ հորը, ինչպես նրան արժան է, բայց որպեսզի գլխի երկարությունը ընթերցողին ձանձրույթ չպատճառի, ուրիշ տեղի և ժամանակի կրողներն այս բաները, այս գրքից դուրս, ինչպես սկզբի մասին էլ խոստացանք գրել:

(Հատած երրորդ, 47):

Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեփին, երանելի Մեսրոպն էլ այս աշ-

խարհէ փոխեցաւ ի Վաղարշաստ քաղաքի, գերագնացալ
քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք:
Քանզի ամբարձաւանութիւն և մարդահանութիւն առ ի նորս
վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին. այլ հետք և լաւա-
կամ և բարեխորհուրդ գոլով, և երկնայնոցն զարդարեալ սո-
վորութեամբք զիննք բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տես-
լեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիս պայծառ,
գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք ան-
նառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով
համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձ-
րոյք:

(Հատած երրորդ, Կէ):

Ողբամ զհեզ, Հայոց աշխարհ, հանուրց նիսիսականաց
վեհագոյն. զի բարձաւ բագաւոր և քահանայ, խորհրդական
և ուսուցող. վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկար-
գութիւն. դրդուեցաւ ուղղափառութիւն, կայկայեցաւ տգիտու-
թեամբ շարափառութիւն:

Ողորմիմ հեզ, եկեղեցի Հայաստանեայց, խրթնացեալ ի
բարեզարդութենէ բեմին, ի քաջէն զրկեալ ի հովուէ և ի
հովուակցէ: Ոչ ևս տեսանեմ զքանաւոր քո հօռ ի վայրի
դալարուջ և ոչ ի ջուրս հանգստեան սնեալ, և ոչ ի փարախ
հաւաքեալ՝ զգուշանալով ի գայլոց, այլ ցրուեալ անապա-
տաց և գահավիժութեանց:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբք):

խարհից փոխվեց Վաղարշապատ ֆաղափում, գերագանցելով բոլոր առափինի մարդկանցից, որպիսիք այն ժամանակ կային: Որովհետև ամբարտալանությունը և մարդահանությունը նրա վարժում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով, երևում էր բոլորին՝ երկնայինների սովորությամբ զարդարված: Որովհետև նա հրեշտակի տեսք ուներ, ծնող միտք, պայծառ էր խոստով, գործերով՝ ժուժկալ, մարմնով՝ փառահեղ, սովորություններով՝ աննման, խորհրդակցությամբ՝ մեծ, հավատով՝ ուղիղ, հույսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձանձնույթ:

(Հատած երրորդ, ԿԷ):

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, հյուսիսային բոլոր ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան քաղալորդ ու ֆահանադ, խորհրդականդ և ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ռվոլյուցիոնարությունը, տգիտությամբ հիմնավորվեց շարափառությունը: Խղևում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ, բեմիդ բարեգարությունից անջֆացած, ֆաջ հովիվից և հովվակցից զրկված: Այլևս շեմ տեսնում եմ բռնավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ ժողովված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբ):

Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ քշուառական պատմութեանս. ո՞րպէս զախտս հանդուրժեցից բերել. զիա՞րդ զմխտս իմ և զլեզուս պնդեցից, և հատուցից զբանս հարցն՝ փոխանակ ծննդեանն և սննդեանն: Քանզի ծնան զիս իւրեանց վարդապետութեամբն և սնուցին, առ այլս առաքելով անեցուցանել: Եւ մինչ նոքա զմերն յուսային զդարձ, և պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիս և կատարելագոյն յարմարութեամբս, համայն և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսայաք հարսանեաց պարել, անվեհեբ երագութեամբ կրքեալք, և առագաստի ասել երգս, — արդ փոխանակ խրախնանութեանն ի վերայ գերեզմանի ողբս ասելով՝ ողորմելի հառաչեմ. ուր և ոչ տեսութեանն ժամանեցի աչաց նոցա կափուցման, և լսել զվերջին բարբառն և զօրհնութիւն:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբք):

Այսպիսեաւ անձկաւ հեղձամղձուկ եղեալ՝ վտանգիմ կարօտութեամբ մերոյ հօրն: Ո՞ւր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս և ահաւորութիւն առ բիրս. ո՞ւր գուարք շրբանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն. ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց. ո՞ւր երկայն նանապարհաց յոյսն հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցանող: Կորեա՛ւ ժողովողն, բագեա՛ւ նաւահանգիստն, ելի՛ք օգնականն, լռեա՛ց ձայնն յորդորեցուցիչ:

Ո՞վ այսունետե կմերս յարգեսցէ զուսումն. ո՞վ սուախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս. ո՞վ զհայրականն բարբառեսցի զուարևութիւն, մասամբ ինչ յաղբահարեալ յորդոյս:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբք):

Յվա՛ղ, այս գրկանճներին, ավա՛ղ այս բշվառ պատմութեան: Ինչպե՞ս դիմանամ այս ցավերին, ինչպե՞ս ամբապնդեմ միտքս ու լեզուս և հայերիս (իմ պարտքը) հատուցեմ այս խոսքով՝ (իմ) ծնունդի և սնունդի փոխարեն: Ռոպինեակ նրանք ինձ ծնան և սնեցին իրենց տված ուսումով և ուրիշնե՛րի մոտ ուղարկեցին կատարելագործվելու: Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեն իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շապ-շտապ դիմելով, հույս ունեինք հարսանիքներում պարել, խիզախ և արագ շարժումներով և առագաստի երգեր երգել, — այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր են ասում, ողորմելի հառաչելով. նույնիսկ շհասա տեսնելու նրանց աչքերի փակվելը, լսելու նրանց վերջին ձայնն ու օրհնությունը:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբ):

Սյապիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում: Ո՞ւր է այն ֆողք աչքերի հանդարտությունը ուպիղների համար և ահավորությունը շարերի համար. ո՞ւր է այն գվարք շրբունների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ արբանյակներ է գրավում. ո՞ւր է երկայն նանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացողը. — կորա՛վ ժողովուրդը, ծածկվե՛ց նավահանգիստը, լփե՛ց օգնականը. լռե՛ց խրախուսիչ ձայնը: Ո՞վ այսուհետև պիտի հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր աշակերտի առաջադիմութեամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի՝ մասամբ իր որդուց հաղթվելով:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբ):

Զմտաւ զայսոսիկ ամելով՝ հառաչումն յիս ի ներսս բն-
 քանայ և արտօւր, և կամեցուցանէ բարբառել բան տխրա-
 կան և սգաւոր: Եւ ոչ գիտեմ, եթէ զիա՛րդ յարմարեցից զող-
 բերգութիւնս, և կամ զո՛վ արտասուեցից. զհէ՞մն իմ մանուկ
 և քագա՛նոր, զխորհրդակցութեամբ վատբարն, զագգաւ ի
 իաց բնկեցիկն, և նախ քան զմահուն մեռելութիւն՝ անփա-
 ռութեամբ յարողոյն ի վայր կործանեալ, եթէ զիս ին՛ն, զի
 վերացաւ ի գլխոյս փարբամացուցիչ պսակն գեղեցիկ և
 կենցաղօգուտ. զհա՞յրն իմ և զհահանայապետ, զմիտսն
 վսեմացեալս, որ երբայր տանէր կատարեալ բան, որով վա-
 րէրն և յարմարէր, և զերասանակս ի բուռն առեալ՝ ուղղէր
 զղէմս և սանձահարէր զլեզուս օտարածայնս, եթէ զիս, քա-
 փուր ի Հոգւոյն մնացեալս խանդից և ցականեալ. զծեռ՞ղն
 իմ, աղբիւր վարդապետական, զարդարութեանն ոռոգող, և
 հեղեղաւ զամբարշտութիւն արտաքս սահմանելով, եթէ զիս,
 երաշտացեալ և քարշամեալ պաստութեամբ արբուցմանց
 խրատու. զաշխարհիս եկեա՞լ աղէտս, եթէ զապագայիցն
 ակնկալութիւն:

Ո՞վ մեզ յայսոսիկ նառակցէ հաւասարելով տրամու-
 քեանս, և օգնեսցէ ախտակցելով ասիցս, կամ յարձանս
 փորագրել:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբք):

Վարդապետք տխմարք և ին՛նհահանք, անձամբ առեալ
 պատիւ և ոչ յՍտուծոյ կոչեցեալ. արժաքով ընտրեալք և
 ոչ Հոգւով. ոսկեսէրք, նախանձտք, քողեալ զհեգութիւն, յո-

Երբ մտածում եմ այս բաների մասին, իմ մեջ հառա-
 չանք և արտասուք են ծագում, ինձ քելադրում են տխրալից
 և սգավոր խոսք ասել: Եվ չգիտեմ՝ ինչպես հորինեմ իմ ող-
 բը և կամ ո՞ւմ արտասվեմ.—արդյոք իմ բշվառ մանուկ
 քաղալորի՞ն, որ վատքար խորհրդակցությամբ իր ցեղով
 քանդե՞րձ դեն գցվեց և նախան մահով մեռնելը անարգա-
 բար քրոսից կործանվեց, քե ինձ, որ գլխից վերցվեց փա-
 ռավորող գեղեցիկ կենցաղօգուտ պսակը. արդյոք իմ հո՞րն
 ու ֆանանայապետին, այն վսեմ միտքը, լի կատարյալ խո-
 հակաճություն, որով կառավարում էր և բարեկարգում,
 և սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս (ընթաց-
 քին) և սանձահարում էր օտարոտի (մտքեր հայտնող) լե-
 գունները, քե ինձ, նրա հոգու խանդից զրկվածիս ու տնան-
 կիս. արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը,
 որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր հշում
 ամբարշտությունը, քե ինձ՝ նրա խրատները խմելու ծարա-
 վից ցամաքածիս ու բշվառիս. արդյոք մեր աշխարհին ար-
 դեն եկա՞ծ աղետները, քե ապագայում սպասվածները:

Ո՞վ մեզ այս բաներում նառակից կլինի՝ մասնակցե-
 լով մեր արտմությանը, ո՞վ մեզ կընկերանա՝ ցավակցելով
 մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբ):

Ուսուցիչներ՝ տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից
 պատիվ գտած և ոչ աստուծոց կոչված, փողով ընտրված և
 ոչ սուրբ հոգով. ոսկեսեր, նախանձոտ, քողած հեգուրյուներ,

րում Աստուած բնակէ, և գայլ բեղեալ՝ զիւրեանց հօտս զիշատելով: Կրօնատրք կեղծատրք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան թէ աստուածասէրք:

Վինակատրք հպարտք, դատարկակացք, գրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրող վանառաց և կատակերգութեանց:

Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյրք առ ի վարդապետել, որք նախ քան գտեսութիւնն աստուածաբանք:

Ժողովրդականք վէսք, ստանակք, մեծախօսք, անվաստակք, այրեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ:

Զօրականք անարիք, սնապարծք, զինատեսցք, պղերգք, հեշտասէրք, անժուովակալք, կողոպտիչք, զինարբուք, յուզարկուք, համաբարոյք աւագակաց:

Իշխանք ապստամբք, գողակից գողոց, կծլիք, կծծիք, ժլատք, ագահք, յափշտակողք, աշխարհաւերք, աղետասէրք, ծառայիցն համամիտք:

Գատատրք տմարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք, անբերողք իրանց, անհաստատք, հակառակողք: Եւ բարձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամօրոյ:

Եւ ապա յանդիմանութիւն այտոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտեսանել Աստուծոյ, և տարեց փոփոխել զբնութիւնս իւրեանց: ...Եւ ի վերայ այս ամենայնի խռովութիւնք յամենայն կողմանց, ըստ այնմ՝ եթէ չիք խաղաղութիւն ամբարշտաց:

Զի քագատրք տիրեալի խիստք և շարաշարք, բեռինս

Handwritten text at the bottom of the page, likely bleed-through from the reverse side. It is mostly illegible due to fading and bleed-through.

որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները՝ կեղծավոր, ցուցամու, սնափառ, պառվասեր, քան աստվածասեր:

Վիճակավորները՝ հպարտ, դատեր սիրող, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող:

Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ՝ փուրաշան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Ժողովրդականները՝ ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասագործ, ժառանգությունից փախչող:

Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, բուլամորթ, կողոպտիչ, գինեմուլ, հելուզակ, ավազակներին բնութենակից:

Իշխանները՝ ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, աշխարհ ավերող, աղտեղասեր, ծառաներին համամիտ:

Դատավորները՝ ամարդի, սուտ, խաբող, կաշառակեր, իրավունքը շղթաշտպանող, անհաստատ, հակառակող:

Եվ առհասարակ սերն ու ամոքք ամենքից վերացած:

Եվ ի՞նչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնությունը: ...Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խոսվութիւն (է հասել), համաձայն այն խոսքի, թէ ամբարիշտներին խաղաղություն չկա:

Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու շար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, ան-

բառնալով ծանունս և դժուարակիրս, հրամանս տալով ան-
տանէլիս. վերակացոյ անհարբարաբ, անողորմ. սիրելիք
դաւանանեալք, և բշնամիք զօրացեալք. հաւատ վանառեալ
բնդ սնուտի կենցաղոյս: Հէնք եկեալ անհատք և յոլովից կող-
մանց. գերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց.
կապումն գլխաւորաց և բանտք յայտնեաց. յօտարութիւն
վտարումն ազատաց և անքիւ նեղութիւնք ռամկաց. առումն
հաղաքաց և քանդումն ամբոցաց. անբումն աւանաց և հր-
դեհումն շինուածոց. սովք անբաւ և հիւանդութիւնք և մահք
բազմօրինակք. աստուածպաշտութիւն մոռացեալ, և ակնկա-
լութիւն գեհեհի:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբք):

տանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավանանված են, բշեամիները զորացած. հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար: Ասպատակություններ են գալիս անհատնում շատ տեղերի վրա, տները գերվում են, ունեցվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են ախարվում ազնվականները, անբիւղ նեղություններ են կրում ուսմիկները, առնվում են ֆաղաֆներ, ֆանդվում են ամբոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր, հիվանդություններ և բազմաաեսակ համաճարակներ: Աստվածապաշտությունը մոռացված է, և կա դժոխքի սկսկալություն:

(Հատած երրորդ, ԿԸ, Ողբ):

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՍՈՒՅԹՆԵՐԸ

Կազմող՝ Գ. Բ. Թոսունյան

Հրատ. խմբագիր Ա. Լ. Սահակյան

Տեխ. խմբագիր Ա. Պ. Շահինյան

Սրբագրիչ Ա. Լ. Սահակյան

Հանձնված է շարվածքի 26. 08. 1991 թ.: Ստորագրված է տպագրության
24. 09. 1991 թ.: Չափը 70×1081/32: Թուղթ № 1: Տառատեսակը «գրքի
սովորական» բարձր տպագրություն: Պայմ. 2,62 մամ., տպագր., 4
մամուլ: Ներկ. մամուլ 2,62: Հրատ.-հաշվարկ 1,87 մամուլ: Տպաքանակ
3000: Հրատ. № 7927: Պատվեր № 238: Գինը 1 ու. 30 կ.:

ՀԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 դ.:

Издательство АН Армени, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀԳԱ հրատարակչության տպարան, 375019,

Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН Армени, 375019, Ереван,

пр. Маршала Баграмяна 24.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0063777

ԳԻՆԸ 1 Ռ. 30 Կ.:

A I
19271